«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Պատմվածքի ուսուցումը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Մարտիրոսյան Նաիրա

ՄԱՐԶ Քաղաք Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՏԹՅՈՒՆ Շահամիր Շահամիրյան կրթահամալիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի Արդիականությունը։ Գրականությունը կյանքի արտացոլանքն է, այն գիտություն է գեղեցիկի մասին։ Գեղարվեստական գրականությունը իրականության գեղեցիկ ու իրական արտացոլումն է, որն օգնում է գեղագիտորեն ընկալել շրջապատող աշխարհը։

Պայմանավորված հայ ժողովրդի պատմական ճակատագրով՝ հայ գրականությունն ունի իր զարգացման օրինաչափությունները, յուրօրինակ, յուրահատուկ գծերը, գաղափարական ու թեմատիկ առանձնահատկությունները։

Հայ գրականության դասավանդման մեթոդիկա՝ առարկան ոչ միայն արժևորում է գեղարվեստական գրականությունը, այլ սովորեցնում է ապագա մանկավարժներին գրականության ուսուցման հիմունքները։ Գրականության դասավանդման մեթոդիկա՝ առարկան մանկավարժության ընդարձակ գիտաճյուղին պատկանող մի բնագավառ է։

Յուրաքանչյուր դաս պլանավորելիս պետք է հաշվի առնել չափորոշիչային եռամակարդակ պահանջները։ Դասի պլանավորումը պետք է ոչ թե ինքնանպատակ լինի, այլև ուսուցչին ուղղորդող, դասի արդյունավետությունը բարձրացնող նշանակություն ունենա։ Դասանյութը պլանավորելիս ու կազմակերպելիս անհրաժեշտ է օգտվել ուսումնաօժանդակ ձեռնարկներում եղած նմուշօրինակներից։

Դասավանդելիս կարելի է գործածել ինչպես ուսուցման համա գործակցային, այնպես էլ ավանդական մեթոդները։ ՈՒսուցման փոխներգործուն մեթոդների նպատակային գործածումն սովորողների համար դասերը դարձնում է հետաքրքիր ու նպաստում նյութի հեշտ յուրացմանը։ Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչն մի քանի մեթոդ իրառի։ Մեթոդների կիրառումը պիտի լինի տեղին ու նպատակային։

Այն լայն բնագավառ է, որի մեջ մտնում են գրականության դասավանդման խնդիրները տարրական դպրոցից մինչև ավագ դպրոց։

Հետազոտության նպատակն ։ Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել պատմվածքի ուսուցման մեթոդները կրտսեր դասարաններում։ Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում վերլուծվել են հետույալ խնդրները։

Հետազոտության խնդիրները:

- ՈՒսումնասիրել պատմվածքը՝ որպես պատմողական գրականության ժանր:
- Վերլուծել պատմվածքի ուսուցման մեթոդները կրտսեր դասարաններում:

Գլուխ 1 Պատմվածքը որպես գրական ժանր

1.1 Պատմվածքը գրականության պատմողական ժանրերից : Սյուժե ունեցող փոքր ծավալի արձակ ստեղծագործություն է: Պատմվածքի մեջ նկարագրվում է կյանքի մի դեպք, դրվագ մեկ կամ մի քանի հերոսների մասին: Պատմվածքի հիմքում հիմնականում ընկած է կենսական որուէ փաստ կամ իրական դեպք: Պատմվածքի մեջ սովորաբար պատկերվում է միայն մի քանի դրվագ հերոսի կյանքից[1]:

Պատմվածքն իր արմատներով կապվում է ժողովրդական բանահյուսության հետ, որտեղից գալիս է նրա հիմնական առանձնահատկությունը՝ պատմելու, վիպելու գիծը: Հետագա զարգացման ընթացքում պատմվածքը և՛ բովանդակության և՛ ձևի տեսակետից ենթարկվել է էական փոփոխությունների:

1.2 **Պատմվածքի առանձնահատկությունները**: Վեպի համեմատությամբ պատմվածքն ընդգրկում է կյանքի նեղ շրջանակ, այստեղ քանակով ավելի քիչ են կերպարները, սահմանափակ՝ դեպքերն ու գործողությունները: Սակայն բարձրարժեք պատմվածքներում նույնպես արտացոլվում են կյանքի էական կողմերը, կատարվում խորքային ընդհանրացումներ, կերտվում գեղարվեստական լիարժեք կերպարներ (օրինակ՝ Նար-Դոսի «Մեր թաղը», Ավ. Իսահակյանի «Գարիբալդիականը», «Համբերանքի չիբուխը», Հովհ. Թումանյանի «Գիքորը», Ա. Բակունցի «Ալպիական մանուշակը», «Նամակ ռուսաց թագավորին»):

Պատմվածքի օրինակ է Ա. Բակունցի «Սպիտակ ձին»: Այդ պատմվածքը հայ գյուղացու ծանր կյանքի նկարագիրն է՝ առանց դեպքերի լայն ծավալման, դեպքերը զարգանում են մի գծով՝ կապված ձիահավաքի հետ, կերպարներն էլ մի քանիսն են:

Մայրենին է այն կախարդական բանալին, որ մարդու առջև բացում է գրականության ու գիտության դռները: Մայրենի գրականության ուսուցիչը յուրաքանչյուր երեխայի ապագայի հանդեպ մեծ պատասխանատվություն ունի: Մեր

[1] Զ. Մ. Գրիգորյան, Ա. Ա. Ղազինյան, «Գրականություն», 1992, «Լույս» հրատարակչություն, էջ 178:

գրականությունն աձնուրաց հայրենասիրության ու բարձր մարդասիրության, անարդարությունների ժխտման ու գեղեցկության ու առողջ սիրո պաշտամունքի համամարդկային, արժեքավոր բանարվեստ է, որի լավագույն գաղափարները լուսավորել են սերունդների բազմադարյան ուղիները, դաստիարակել քաջարի հերոսամարտիկների, անխոնջ շինարարների, իմաստուն բժիշկների ու խորաթափանց գիտնականների: Նոր սերնդին ճշմարիտ հայրենասիրությամբ դաստիարակելը համաժողովրդական գործ է: Սիրել հայրենիքը նշանակում է սիրել մայր լեզուն, կատարելապես ըմբռնել մշակույթը, գրականությունը, ճանաչել նրա մեծ ու հզոր առօրյան, իմանալ, որ հայրենիք կոչվածը սոսկ բառ չէ, որ այն սկսվում է մանկական օրրանից, հարազատ օջախից, փողոցից, դպրոցից, բնակավայրից, ընդգրկում մեր երկրի յուրաքանչյուր անկյուն: Հայրենիքը միայն աշխարհագրական սահմանագծում չէ, այլ գաղափար, ոգի է, հերոսացող մարդիկ: Սովորողները դպրոցն ավարտելիս պետք է կատարելապես տիրապետեն իրենց մայրենի լեզվին, զգան նրա գրավչությունն ու հարստությունը, հաճույք ստանան նրանով խոսելիս, անեղծ պահեն խորթ ու օտարազդեցություններից: Մեր սաների շուրթերին մայրենին պետք է հնչի որպես նվիրական երգ՝ ծնված նրանց ամենասուրբ զգացումներից:

ՈՒսումնական գործում ուսովորողի կյանքում մայրենի լեզվի ուսուցման կրթադաստիարակչական դերը համարժեք է նրան, որ կատարում է ազգային լեզուն ազգի կյանքում՝ նրա եղելիության և գոյատևման, ինքնության ու ինքնուրույնության պահպանման ու գործում: Մայրենի լեզվի՝ ազգային մշակույթի այս բարձրագույն ձևի լիարժեք ու կատարյալ ուսուցման գործին պետք է վերաբերվել երկյուղածության հասնող պատասխանատվության բարձր զգացումով:

Գլուխ 2 Պատմվածքի ուսուցման մեթոդները տարրական դասարաններում

Պատմվածքի ուսուցումը կրտսեր դասարաներում պետք է նպաստի սովորողների ինքնուրույն բանավոր ու գրավոր խոսք կառուցելու կարողությունների, հմտությունների ու տրամաբանական ունակությունների զարգացմանը: ուսուցման համակարգում մշտական խնդիր է ինքնակատարելագործման, հոգեբանամանկավարժական մեթոդների բարեփոխման անհրաժեշտությունը:

Ժամանակակից դասը հենվում է մանկավարժության՝ քննություն բռնած բազմադարյան փորձի ու ավանդույթների վրա՝ ձուլելով արդիական պահանջները: ՈՒսուցման ընթացքում ուսուցչի ղեկավարությամբ սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, ունակություններ ու հմտություններ, նրանց մեջ ձուավորվում են ճիշտ հայացքներ, հաստատուն համոզմունքներ, մարդկային լավագույն հատկանիշներ, զարգանում են նրանց ճանաչողական, մտածողական ու դատողական կարողությունները:

Գլուխ 3 Պատմվածքի ուսուցման մեթոդիկայի սկզբունքները: Բարոյական ու հոգեկան աճ է ապրում այսօրվա դպրոցականը, փոխվել է նրա ընդհանուր հետաքրքրությունների շրջանակը, ճաշակն ու մտածողությունը:

Պատմվածքի ուսուցման մեթոդիկան իր բովանդակությամբ կապվում է երկու կողմերի՝ ուսուցչի՝ ուսուցանողի ուսվորրողի՝ ուսուցանվողի հետ: երկկողմանի է՝ ուսուցչի ուսումնատվության ու սովորողի ուսումնառության անբաժանելի միասնությունը, նրանց փոխկապակցված գործունեությունը: Երկու կողմերը առնչվում են պատմվածքը ուսուցանելու հետ կապված տարբեր ոլորտներում՝ դպրոցական աշխատանք, տնային աշխատանք, ծրագրային հանձնարարություն, ծրագրից դուրս հանձնարարություն: ուսուցման օղակները ունեն տարբեր դեր ու նշանակություն, բայց սերտորեն կապված են իրար հետ, շարունակում, լրացնում ու ամբողջացնում են միմյանց: ուսուցման ընթացքում ուսուցիչը ուսուցանում է, կրթում, դաստիարակում, իսկ սովորողները՝ սովորում , կրթվում ու դաստիարակվում: ուսուցումն ներառում է դասարանային, տնային ու արտադասարանական աշխատանքները, ու բոլոր օղակներում ուսուցչի ուսումնատվությունն ու սովորողների ուսումնառությունը դրսուորվում են սերտ միասնության մեջ:

Պատմվածքը տարրական դպրոցական դասընթացի ծրագրով ընդգրկում է ուսումնական նյութերի մի ամբողջ համակարգ՝ գեղարվեստական ստեղծագործություններ, պատմագրական ու կենսագրական տեղեկություններ, գրական-տեսական գիտելիքներ, որոնք կազմում են այդ դասընթացի բովանդակությունը: ՈՒսումնական նյութերը գրականության ծրագրում բաշխվում են տարբեր դասարանների միջև, ապա՝ յուրաքանչյուր դասարաի ներսում:

Տարրական դասարաններում պատմվածքի դասավանդման ընթացում նախատեսվող ուսումնական նյութերի համամասնական ու աստիճանական դասավորումը կազմում է դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը: Գրականության դասընթացի բովանդակության ու կառուցվածքի համար կարևոր նշանակություն ունեն և՛ կրթադաստիարակչական խնդիրները, և՛ սովորողների տարիքն ու զարգացման մակարդակը:Այսպիսով գրականության մեթոդիկան, նկատի ունենալով այդ հանգամանքը, սահմանագծում, բացատրում ու հիմնավորում է գրականության դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը:

Արդի ժամանակաշրջանում որոշակիորեն փոխվել են գրականության դասավանդման մեթոդիկայի մի շարք հարցեր: Հայաստանը պետականություն ունեցող երկիր է ու ունի կրթական խնդիրներում, հատկապես գաղափարական առումով, նոր մոտեցումներ: Մշակվել է «Հանրակրթության պետական նոր կրթակարգ»:Այն դրվել է լայն քննարկման: Հայաստանի դպրոցական համակարգում ուրվագծային մակարդակով ծանոթ են նաև տարբեր երկրների դպրոցական ուսուցման ձևերի մեթոդները, որոնք որոշակիորեն ուղենշային են մեր դպրոցներում գրականություն դասավանդող ուսուցիչների համար: Հայ գրականության դպրոցական ուսուցումը հատկապես կարևոր է ազգային դաստիարակության համար: Այն նպաստում է մարդու մեջ համամարդկային հատկանիշեր ձևավորելու բարձրագույն խնդրի լուծմանը:

Գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձուավորմանը զուգահեռ կարևորվում է անձի՝ որպես հանրության լիիրավ անդամի, համագործակցող, կյանքի փոփոխություններին հարմարվող ու ճկուն կերպով արձագանքող անհատականության ձևավորմանը: Կրթության բովանդակության հիմնական կազմակերպիչն ուսուցիչն է, նրա ջանքերով ու ամենօրյա ստեղծագործական աշխատանքով է պայմանավորված կրթական գործի արդյունավետությունը:

Կրտսեր, միջին ու ավագ դպրոցներում լիովին տարբեր են պատմվածքի ուսուցման բովանդակությունը ու նրանից բխող խնդիրները, բայց նրանք սերտորեն կապված են իրար հետ:

Պատմվածքի դասավանդման մեթոդիկան յուրացնելու ու սովորողներին խորքային կրթություն տալու համար անհրաժեշտ է լավ պատկերացնել պատմվածքի գեղագիտական նշանակությունը, ընկալել պատմվածքը որպես գեղեցիկի մասին արվեստ, ճանաչել սեփական պատմությունն ու գրականությունը, ազգային արժեքները, դաստիարակված լինել ազգային ոգով:

Գեղարվեստական պատմվածքն արտացոլում է իրականությունը, մարդկանց հոգեբանությունն ու կենսաձևն, պատկերում բնության տեսարանները: Նրա համար թեման կյանքն է իր բազմազանությամբ: Պատմվածքի դասավանդման ժամանակ ուսուցիչը աշակերտների մեջ պետք է սերմանի մարդկային ազնիվ զգացումներ, վեհ գաղափարներ, լավագույն հատկություններ, սեր ու հետաքրքրություն առաջացնի մայրենի լեզվի նկատմամբ, յուրացնել գրական երկերի լեզուն ու ոճը, հարստացնի բառապաշարը, պատկերացումներն ու տեղեկությունները կյանքի վերաբերյալ, զարգացնի բանավոր ու գրավոր խոսքը:

Կրտսեր դասարանների պատմվածքի ուսուցման նպատակն է աշակերտների գրական կրթության ապահովումը, գաղափարական ու գեղագիտական դաստիարակությունը, խոսքի զարգացումն ու մտահորիզոնի ընդլայնումը: Աշակերտների լեզվի զարգացման համար կևոր է նպատակային աշխատանքի կազմակերպումը, որի համար հատկացվում են առանձին դասաժամեր:

Պատմվածքի ուսուցման ժամանակ գլխավոր դերը ուսուցչինն է: Այդ առարկայի դասավանդման հաջողությունը կախված է ուսուցչի մեթոդի ընտրությունից:Հարկավոր է,որ ուսուցիչը հրաշալի իմանա, թե ինչ է ուսուցանում, ինչպիսի գեղարվեստական նյութի, պատմամշակութային տեղեկությունների, գրական-տեսական գիտելիքների, գործնական ունակությունների ու հմտությունների համակարգ է դասավանդում: ՈՒսուցիչը պետք է տիրապետի գրականության դպրոցական դասընթացին, նաև իմանա, թե որ բաժինները որ դասարանների համար է նախատեսված: ՈՒսուցիչը քաջատեղյակ պետք է լինի ոչ միայն պատմվածքի դպրոցական դասընթացին , այլ նաև բնագրին:

Պատմվածքի ուսուցման մեթոդները կրտսեր դասարաններում հիմնված են առաջին հերթին մանկավարժության վրա: Առանց մանկավարժության

ուսուցողական համակարգի յուրացման անհնարա է գրականության դասավանդման մեթոդիկայի արդյունավետ կիրառումը: Մանկավարժական ուսուցողական ողջ համակարգը բացահայտում է ուսուցման ընդհանուր օրինաչափությունները, որոնք վերաբերում են ուսուցանվող առարկաներին:

Ցածր դասարանների պատմվածքի ուսուցման մեթոդիկան մանկավարժության ուսուցողական համակարգից առանձնացնում է այն, ինչը նպատակահարմար է մեթոդական համակարգը կազմելու համար: Մանկավարժությունը միևնույն ժամանակ ընդգրկում է թե՛ ուսուցման, և թե՛ դաստիարակության տեսությունը : Մանկավարժական գիտության մեջ դիդակտիկան (կամ տեսություն) լինում է ընդհանուր (ուսուցման ընդհանուր տեսություն) և մասնավոր (մեկ առանձին առարկայի ուսուցման տեսություն):

Պատմվածքի մեթոդիկան կապված է նաև հոգեբանության հետ: Այս առումով կան մի քանի իրողություններ: Հոգեբանությունը մեծ կապ ունի մանկավարժության հետ, և այն կարևոր գործոն է գրական առանձին երկերի ուսուցման համար:

Պատմվածքի դասի մեթոդիկայի գլխավոր խնդիրն է օրինակելի մարդ ու բազմագիտակ, կրթված անհատ դաստիարակելը: Հոգեբանությունը որպես գիտաճյուղ նպաստում է գրականության դասավանդման մեթոդիկայի ճիշտ մոտեցումները կառուցելիս, այսինքն՝ տվյալ երկը որ դասարանում պետք է անցնել և որ խմբի համար է մատչելի:

Պատմվածքի դասավանդման մեթոդիկան տարրական դասարաններում կապված է գրականության տեսությանն հետ, գրականագիտությանը ուգրականության պատմությանը՝ բնագրային գիտելիքների հարուստ պաշարով: Գրականագետը հմտորեն սկսում է գրականագիտական գիտելիքների ուսուցումը, դրանց ծավալը մեծացնում է միջին դասարաններում, իսկ ավագ դասարաններում արդեն ուսուցանում է գրականագիտական հմտությունների յուրացում դպրոցական չափանիշներով:

Պատմվածքի մեջ հիմնականում պատկերվում է մարդն իր բազմաբովանդակ կյանքով, էությամբ, հետևաբար երկերի ուսումնասիրության ընթացքում շատ լուրջ ուշադրություն է դարձվում գործող անձանց և նրանց ներաշխարհի ու գործելակերպի բացատրման, բնութագրման վրա:

Գեղարվեստական երկերի ուսումնասիրման ընթացքում կարևորվում աշակերտների տարիքային առանձնահատկությունները, զարգացման աստիճանը, կենսափորձը, մտավոր ու ֆիզիկական կարողությունները, բնավորության ու խառնվածքի առանձնահատկությունները: Ինժեները, ծրագրավորողը, բնագետը, քիմիկոսը, բժիշկը, առավել ևս հումանիտար գիտաճյուղերն ընտրած շրջանավարտը դպրոցն ավարտելուց հետո գիտելիքների որոշակի պաշար պետք է ունենա: Նրանք պետք է տարբերեն պատմվածքը վիպակից, պոեմը բանաստեղծությունից,իսկ ողբերգությունը կատակերգությունից: Միջին դասարաններում աշակերտները հպանցիկ են անդրադառնում գրական ժանրերին ու գրականագիտական հասկացություններին:

Գլուխ 4 Պատմվածքի ուսուցման գեղագիտական նշանակությունը: Պատմվածքի դասավանդման մեթոդիկան կրտսեր դասարաններում կապված է նաև գեղագիտության հետ: Գեղագիտությունը մարդու մեջ զարգացնում է գեղեցիկը ընկալելու կարողություն: Սովորողները դաստիարակվում են գեղագիտորեն ու բարոյապես: Գեղարվեստական գրականությունը կյանքը պատկերում է գեղագիտական տեսանկյունից՝ մերժելով սխալը, նվաստն, արատավորը, հաստատելով հակառակը՝ գեղեցիկն ու կատարյալը:

Գեղագիտության ոլորտը շատ լայն է. այն ընդգրկում է բնության գեղեցկությունը, մարդկային մարմնի կատարելությունը, մարդու արարքի, բարոյական չափանիշների, փոխհարաբերությունների գեղեցկությունը, այսինքն՝ հոգեկան գեղեցկությունը: Գրականության՝ որպես իրականության գեղարվեստական ճանաչողության ուսուցման համար մեծ նշանակություն ունի իրականության գիտակցումը:

Պատմվածքի դասավանդման մեթոդիկան լայն շփումներ ունի լեզվաբանության հետ: ՈՒսուցչի համար խիստ կարևոր է ճշտորեն որոշել, թե հայ գրողի տվյալ երկը ինչպիսի լեզվով է գրված՝ գրաբար թե աշխարհաբար, գրական լեզվով է, թե խոսակցական, միջին հայերեն թե ուշ դարերի գրաբար,կամ որ տարածքի բարբառն է:

Գրականության ուսուցիչը պետք է տիրապետի արևելահայերեն և արևմտահայերեն լեզուներին: Կարևորի գեղարվեստական երկերի լեզուն ու ոճը:

Պատմվածքի ուսուցման մեթոդիկան հիմնված է մեթոդամանկավարժական մտքի պատմության վրա: Հայ գրականության ուսուցումը գալիս է խոր անցյալից: Հայ մեթոդամանկավարժական մտքի պատմության ընթացքում հայոց լեզվի ու գրականության ուսուցման հարցերը միշտ էլ հուզել և զբաղեցրել են մեր առաջադեմ մանկավարժներին, մեթոդիստներին, գրողներին ու բանասերներին:

Նրանք, մշակելով հայոց լեզվի ուղղագրության ուսուցման հարցերը, ստեղծել են բազմաթիվ ու բազմազան ծրագրեր, դասագրքեր, ընթերցարաններ, քրեստոմատիաներ, ուղեցույցներ, որոնք կազմում են մեր անցյալի մեթոդամանկավարժական ժառանգության հիմքը:

Ինչպես յուրաքանչյուր առարկայի, այնպես էլ պատմվածքի դասավանդման մեթոդիկայի փորձաքարն ու կենսատու աղբյուրը մանկավարժական աշխատանքի պրակտիկան է:

Պատմվածքի դասավանդման մեթոդիկան հիմնվում է մանկավարժական աշխատանքի և պրակտիկայի վրա, օգտագործում գրականության ուսուցման բնագավառի նվաճումները, մանավանդ առաջատար ուսուցիչների ուսանելի փորձը ու գիտափորձառական, հետազոտական աշխատանքի տված արդյունքները: Այս մեթոդիկան որոշում է գրականության դպրոցական դասընթացի կրթադաստիարակչական խնդիրները, բովանդակությունն ու կառուցվածքը, ցույց է տալիս նրա ուսուցման սկզբունքները, ձևերն ու մեթոդները ու դրանց գործնական կիրառումը:

Յուրաքանչյուր գիտության հիմնական խնդիրն է բացահայտել իր բնագավառին վերաբերող երևույթների բուն օրինաչափություններն և ստեղծել դրանց վերաբերյալ օրենքներ ու կանոններ: Գրականության ուսուցումը լայն ընդգրկում ունի: Նրանում բազմաթիվ հարաբերություններ են ստեղծվումուսուցչի և աշակերտի միջև, տեղի են ունենում մի շարք երևույթներ, որոնք գտնվում են փոխադարձ կապի ու փոխըմբռնման մեջ նաև ունեն ներքին օրինաչափություններ:

Հարուստ գիտելիքներ ունենալը լավ ուսուցիչ լինելու կարևոր նախապայմանն է: Նա պետք է գիտելիքները շարունակաբար զարգացնի ժամանակակից կրթության մակարդակի զարգացմանն ու հասարակության պահանջներին համեմատ:

ՈՒսուցանվող գրական նյութի և սովորողների խոսքային գործունեության միջև պետք է լինի փոխադարձ կապ: Նպատակը ոչ միայն սովորողների ճանաչելն ու արժևորելն է մեր գրականությունն ու գրավոր մշակույթը, դաստիարակվելն նրանում եղած լավագույն գաղափարների ազդեցությամբ, այլ գեղարվեստորեն ընկալելն շրջապատող աշխարհը, և նրա մասին մտածել ու գրել բարձրարվեստ խոսքով: ՈՒսուցիչը պետք է զարգացնի աշակերտների ստեղծագործական կարողությունները, հայտնաբերի բնատուր ձիրք ունեցողներին ու օգնի, որ դրսուորվեն նրանց ունակությունները: Դրա նախապայմանը հարուստ բառապաշարն է, մայրենիի բառագանձը ճանաչելը:

Գրականության ուսուցումն ընթանում է երեք մասնաբաժնով: Տարրական դպրոցում գեղարվեստական գրականությունը հիմնականում նպաստում է հայոց լեզվի ուսուցմանը, այն «Հայոց լեզու» առարկայի մի մասն է: Միջին դպրոցում հայ գրականություն առարկան հանդես է եկել որպես առանձին դասընթաց, որում համառոտ ձուով անցնում էինն այնպիսի երկեր, որոնք հետո անցնելու էին ամբողջական: Սա փաստորեն «Հայ գրականություն» առարկայի կարևոր սկզբնաղբյուրն է: Այս հատվածից շատ բան է կախված, եթե այն նախապատրաստվում է պատշաճ կերպով, ապա ավագ դպրոցում մեծանում է սովորողի հետաքրքրությունը «Հայ գրականություն» առարկայի նկատմամբ:

Տարրական դասարանների դասագրքերում հիմնականում ներառված են այնպիսի պատմվածքներ, որոնք վերաբերում են երեխաների կյանքին կամ նրանց հետաքրքրող թեմաներին: Պատմվածքի ուսուցման ժամանակ պետք է կարուորել ոչ միայն նրա գեղարվեստական արժեքը, այլու ճանաչողական ու դաստիարակչական հնարավորությունները: Պատմվածքի ուսուցումը իրագործվում է բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչների կիառմամբ:

Փորձը ցույց է տալիս, որ տարական դպրոցականները առավել հեշտությամբ են ընկալում պարզ կառուցվածքով, քիչ դեպքերով ու սակավաթիվ հերոսներով , առավել մատչելի ու պարզ գաղափարներով ստեղծագործությունները: Հատկապես մատչելի են այն պատմվածքները, որոնցում դեպքերն ու հեղինակի մտահղացումները շարադրվում են հաջորդական զարգացմամբ: Երեխաները դժվարությամբ են հասկանում ու վերարտադրում այն պատմվածքները, որտեղ կան

բաց թողնված դեպքեր /պիտի սովորողը կռահի դրանք/, կամ ունեն բարդ իմաստային կապեր, թաքնված ենթատեքստեր:

Պատմվածքի ընթերցման ու նրա շուրջ տարվող աշխատանքի մեթոդական շղթան հետևյալն է.

Նախապատրաստական զրույց-ընթերցվելիք պատմվածքի ունկնդրմանը , նրա թեմայի մեջ ներթափանցելու հիմնական մտքի ընկալման համար անհրաժեշտ է իրականացնել նախապատրաստական կարճ զրույց:

Գլուխ 5 Աշխատանք բնագրի հետ: Բնագրի ամբողջական ընթերցումը: Ընդունված է, որ ուսուցիչն առաջին անգամ կամ սովորողներից մեկը ստեղծագործությունը պետք է կարդա ամբողջությամբ, որպեսզի բովանդակությունը հասկանալի դառնա երեխաներին: Առավել շահեկան է, որ երկրորդ դասարանից սկսած՝ նյութն ընթերցեն սովորողները:

Բնագրի ընթերցում մասերով:Ընթերցանության այս տեսակն կատարումնում են սովորողները, իսկ ուսուցիչն այս գործընթացի կազմակերպիչն է, սովորողների օգնականն ու գործընկերը, զրուցակիցը:

Աշխատանք բնագրի վրա - բնագրի շուրջ անցկացվող զրույցի միջոցով սովորողները ոչ միայն ըմբռնում են ստեղծագործության մեջ նկարագրված դեպքերի տրամաբանությունն ու հաջորդականությունը, այլև հասկանում են կարդացածը, իմաստավորում , կատարում են պարզ, մեկնաբանություններ, դիտարկումներ, համեմատություններ, ընդհանրացումներ:

Բնագրի վերաբերյալ քննարկումների, նրա հերոսների գործողությունների շուրջ հարցազրույցը կազմակերպելիս կամ տեքստի գլխավոր միտքը, ենթատեքստը որոշելիս պիտի նկատի ունենալ, որ յուրաքանչյուր երեխա մի անհատականություն է, ունի իրեն հատուկ առանձնահատկություններ, այսինքն՝ ամեն մի երեխա եզակի է:

Բովանդակության վերարտադրում կամ պատմում նախապես կազմած հարցաշարի ու հենակետային բառերի օգնությամբ :Աշակերտները դասարանում պատմում են ընթերցած ստեղծագործության բովանդակությունը:

Ամփոփում- պատմվածքի հիմնական մտքի, ենթատեքստի, նրա արժեքային կողմի վերլուծությունը, ճանաչողական, բարոյակրթական ու լեզվական հիմնական արժեքների բացահայտումը և ամփոփումը իրականացվում են դասի վերջում, երբ

ուսուցիչը վստահ է, որ լուծել է իրեն առջադրված խնդիրները: Ամփոփման ընթացքում պիտի կարևորել երեխաների խոսքը, դատողությունները: Որպեսզի դասարանում տիրի ստեղծագործական մթնոլորտ, ու սովորողներն անցնեն գիտելիքի ձեռքբերում-իմաստավորում/հասկացում-յուրացում/- կիրառում- նոր գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում ուղին,պետք է ապահովել՝

- զգացմունքների,զգացողությունների, արտահայտման
- զգացմունքների լիցքաթափման ,պարպման, պայմաններ,
- սեփական երուակայական մտքերն արտահայտելու հնարավորություն
- ուսուցչի կարծիքի պարտադրման կամ մի հարցի շուրջ պատրաստի դատողությունների բացառում,
- գեղարվեստական կերպարների հոգեվիճակի , գործողությունների դրդապատ-ճառների զգացմունքային վերապրում,
- յուրաքանչյուր երեխայի կարծիքի հանդեպ հարգանք ու հանդուր-ժողականություն,
- որուէ մի հարցում անհամաձայնությունն արտահայտելու բարեկիրթ ձեւերի դրսեւորում[2]:

Պատմվածքի ուսուցման կարևոր հիմքը ծրագրով նախատեսված գրական երկերի, բնագրային նյութերի ըմբռնումն ու մտապահումն է: Պատմվածքի դասի գերագույն խնդիրը բնագրի համակողմանի ուսումնասիրումը, սովորողի կողմից նրա առաջադիմական գաղափարների մեկնաբանությունն է:Այն ամբողջանում է նյութի նախապատրաստման, ընթերցման, մշակման, վերարտադրման ընթացքում: Այդ առումով անժխտելի արժեք ունի այն , թե նյութի հաղորդման ընթացքում ինչպիսի մեթոդներ կընտրի դասավանդողը: Այս նպատակի համար հնարավոր է շատ մեթոդներ գործածել: Այդ մեթոդներից են՝ «Միրգ ենք մաքրում», «Գեղեցիկն ու ճշմարիտը», «Երեք ինչու՞» ու այլն: Ներկայացնենք «Միրգ ենք մաքրում» մեթոդը.

[2] Ջ. Գյուլամիրյան , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2006



Մեզ անհրաժեշտ է՝ թուղթ, գունավոր մատիտներներ, գրիչ:

- << Կեղեւը>> ուսումնասիրելիս սովորողները կներկայացնեն, թե ինչ գիտեն թեմայի մասին:

Այս փուլի ընթացքում ակտիվանում է սովորողների փորձառությունը, ներգրավվածությունը աշխատանքի մեջ:

- <<Մեմբրանը>> - ի՞նչ եմ ուզում իմանալ- փուլի ժամանակ՝ հարցեր են տալիս երեխաները, սկսում է շարժվել հետաքրքրասիրությունը:
- <<Միջուկը>> ներկայացնելիս սովորողները կատարում են բացահայտումներ տվյալ թեմայի վերաբերյալ:
- <<Կորիզը>> հիմնական միտքն է, որի ժամանակ սովորողները կներկայացնեն իրենց եզրահանգումները, դատողությունները:

Մեթոդը ակտիվ սովորողակենտրոն առավելություններ ունի ու թույլ է տալիս համակարգային մտածողություն: Մտածողության ընթացքը ավելի ակնառու է դարձնում ու ներգրավվում է ամբողջական դասի ընթացքում:

Մեկ բառով այս մեթոդը ես կանվանեի <<Մոլորակ>>, որովհետև <<Մոլորակ>>-ը պտտվում- պտտվում է իր առանցքի շուրջը (այս դեպքում առանցքը աշակերտներն են),իսկ սովորողները հերթականությամբ բացահայտում են <<Մոլորակի մթնոլորտային շերտերը>> :

Այս մեթոդի գործածությամբ ուսուցիչը կհասնի սովորողների ակտիվ ներգրավվածությանը աշխատանքի ընթացքում:Սովորողները հարցեր կառաջադրեն, կշարժի հետաքրքրասիրությունը, բնագրի յուրքանչյուր հատվածի շուրջ կկատարեն բացահայտումներ, կներկայացնեն իրենց եզրահանգումները,դատողությունները:

Մեթոդի կիառումը թույլ կտա ուսուցչին հասնել այն վերջնարդյունքին, որ աշակերտները կհասկանան իրենց սովորածի հիմնական գաղափարը, կարժևորեն ու կկիրառեն իրենց կյանքում:

Պատմվածքի բովանդակության, հիմնական մտքի՝ գաղափարի ճիշտ ու ընթացքում պետք է նպաստել, որ սովորողները ոչ միայն ամփոփեն մեկ դասի ընթացքում ձեռք բերածը, այլու արտահայտեն իրենց սեփական կարծիքը , հայացքը, դիրքորոշումը, տեսակետը ձուավորելու համար իրենք կմտածեն, կիմաստավորեն ու հենվելով նաու կարդացածից ձեռք բերածի վրա՝ կամբողջացնեն սեփական մոտեցումը, այսինքն՝ կձուավորեն իրենց «ճիշտը»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, պատմվածքի դասավանդման ընթացում նախատեսվող ուսումնական նյութերի համամասնական ու աստիճանական դասավորումը կազմում է այդ դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը: Գրականության դասընթացի բովանդակության ու կառուցվածքի համար կարուոր նշանակություն ունեն և՛ կրթադաստիարակչական խնդիրները, և՛ սովորողների տարիքն ու զարգացման մակարդակը: ՈՒստի գրականության մեթոդիկան, հաշվի առնելով այդ հանգամանքը, սահմանագծում, բացատրում և հիմնավորում է գրականության դասընթացի կառուցվածքն ու բովանդակություն:

Պատմվածքի ուսուցման մեթոդիկան իր բովանդակությամբ կապվում է երկու կողմերի՝ դասավանդողի՝ սովորեցնողի ու սովորողի՝ աշակերտի հետ: ՈՒսուցումը երկկողմանի է՝ ուսուցչի ուսումնատվության ու սովորողի ուսումնառության սերտ, անբաժանելի միասնությունը, նրանց փոխկապակցված գործունեությունը: Այդ երկու կողմերը առնչվում են պատմվածքը ուսուցանելու հետ կապված տարբեր ոլորտներում՝ դպրոցական աշխատանք, տնային աշխատանք, ծրագրային հանձնարարություն, ծրագրից դուրս հանձնարարություն: ՈՒսուցման այդ օղակները թեև ունեն տարբեր նշանակություն և դեր, բայց սերտորեն կապված են իրար հետ, շարունակում, լրացնում և ամբողջացնում են միմյանց: ուսուցման ընթացքում ուսուցիչը ուսուցանում է, կրթում, դաստիարակում, իսկ սովորողները սովորում են, կրթվում ու դաստիարակվում:ՈՒսուցումն ընդգրկում է դասարանային, տնային ու արտադասարանական աշխատանքները, և այդ բոլոր օղակներում դասավանդողի ուսումնատվությունն ու սովորողների ուսումնառությունը դրսեւորվում են սերտ միասնության մեջ:

Պատմվածքի ուսուցման մեթոդիկան յուրացնելու ու սովորողներին հիմնովին կրթություն տալու համար անհրաժեշտ է լավ պատկերացնել պատմվածքի գեղագիտական նշանակությունը, ընկալել պատմվածքը որպես գեղեցիկի մասին արվեստ, ճանաչել սեփական պատմությունն ու գրականությունը, ազգային արժեքները, դաստիարակված լինել ազգային հպարտության հոգեբանությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 1

Գլուխ 1 Պատմվածքը որպես գրական ժանր ---------- 2

Գլուխ 2 Պատմվածքի ուսուցման մեթոդները տարրական դասարաններում--------- 3

Գլուխ 3 Պատմվածքի ուսուցման մեթոդիկայի սկզբունքները---------- 4

Գլուխ 4 Պատմվածքի ուսուցման գեղագիտական նշանակությունը---------- 8

Գլուխ 5 Աշխատանք բնագրի հետ---------- 1

Եզրակացություն ---------- 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Ե. 2005
2. Զ. Մ. Գրիգորյան, Ա. Ա. Ղազինյան, «Գրականություն», 1992, «Լույս» հրատարակչություն։
3. Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան. «Գրականագիտական բառարան», Երուան, 1980,
4. Թ. Ջահուրյան , Հայ գրականության մեթոդիկա, Եր., 1980, էջ 41.
5. Խ. Բաղիկյան, ժամանակակից հայոց լոզվի ուսուցում, երուան, 1982,
6. Ն. Ե. Կովալյով, Մանկավարժության ներածություն, Երուան, 1977:
7. Զ. Գյուլամիրյան , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երուան 2006
8. Ս.Վ. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասսվնսմսն մեթոդիկա, Եր., 1987:
9. Айсмонтас Б. Б. Теория обучения. Схемы и тесты, М., «Владос»,2002.
10. 10. Справочник руководителя и учителя начальной школы, «Родничок»,Тула,1999.
11. Завадская Т. Ф. Методика выразительного чтения, М. 1987.
12. 2. Селевко Г. К., Традиционная педагогическая технология и ее гуманистическая модернизация, М., 2005.
13. 3. Якиманская И. С. Личностно-ориентированное обучение в современной школе, М. 2000